## ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

16.07.2013թ

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ ՝ Յու. Մանվելյանի, ավագանու անդամների և համայնքի բնակիչների

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտի գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> , <<Իրավական ակտերի մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքով, համայնքի ավագանու անդամների, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում հետևյալ գործունեությունը. ըստ բնագավառների

### 1.ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, սահմանված կարգով. ընդունելության է առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ.
- Քաղաքացիներին տրվել է տարբեր բնույթի 1011 տեղեկանքներ.

### 2. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Սահմանված կարգով տրվել է շինարարության թույլտվություն.
- կազմակերպվել է համայնքի աղբահանությունը.

### 3. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Աջակցություն է ցուցաբերվել զորակոչին, զորակոչվել է հայկական բանակ 19 զորակոչիկ:
- Միջոցներ է ձեռնարկվել զոհված ազատամարտիկների ընտանիքների և պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը:

### 4. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը:

### 5. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Հսկողություն է իրականացվել առևտրի, հանրային սննդի ծառայությունների ոլորտում:
- Տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն:

- Տրվել է համայնքի տարածքում տեխնիկական հեղուկների և հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:

6. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքային ենթակայության մանկապարտեզների, մշակույթի տան, գրադարանի գործունեությունը:
- Համայնքում գործում է երկու միջնակարգ դպրոց:
- Համայնքում գործում է հոգևոր դպրոց, որտեղ դասերից դուրս ուսուցանում են հոգևոր դաստիարակություն, գործում է տարբեր խմբակներ:
- Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ (ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝24.04, հաղթանակի և խաղաղության օր՝09.05, Հանրապետության տոն 28.05, Երեխաների իրավունքների պաշտպանության օր՝ 01.06):

7. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքային ենթակայության առողջապահական և մարզական հիմնարկների գործունեությունը:

8. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Համայնքի տարածքում կազմակերպվել է սոցիալական օգնության ծառայության գործունեությունը:

9. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության , հակահամաճարակային միջոցառումները:
- Աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար:
- Համայնքի տարածքում շահագործվում է 3հակակարկտային կայան:

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- Գյուղապետարանի շենքի վերանորոգում.
- Խմելաջրի բացակայություն.
- Ճանապարհների ասֆալտապատում.
- Փողոցների լուսավորում.
- Հակակարկտային կայանների տեղադրում:
- Բնակֆոնդի բարելավում.

ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ՀԱՐԹԵՆՅԱՆ

2013թվականի հուլիս 16

գ. Քարակերտ